Մամուլի հաղորդագրություն
19 սեպտեմբերի 2023թ.

ՔՈԱՖ «Կոնցեպտ»-ն ու փառատոնը կծառայեն Լոռու գրավչության բարձրացմանն ու կրթական նոր ծրագրերի ընդլայնմանը

Սեպտեմբերի 16-ին Լոռու Դեբետ համայնքում գտնվող ՔՈԱՖ ԱՄԱՐԹ ավանում տեղի ունեցավ Հայաստանի խոշորագույն սոցիալական ձեռնարկություն ՔՈԱՖ «Կոնցեպտի» հանդիսավոր բացման արարողությունը: ՔՈԱՖ «Կոնցեպտն» իրենից ներկայացնում է մինիմալիստական մոտիվներով կառուցված հյուրանոցային համալիր՝ համագումարների ժամանակակից կենտրոնով և իր ռեստորանով: Սոցիալական այս ձեռնարկությունը կծառայի որպես հանգստի, մասնագիտական և հասարակական միջոցառումների համար յուրահատուկ վայր՝ այդպիսով ապահովելով ՔՈԱՖ-ի կրթական ծրագրերի շարունակականությունն ու ընդլայնումը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, կառավարության բարձրաստիճան անդամներ, ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններ և միջազգային ներկայացուցիչներ, մասնավոր տարբեր ոլորտներ ներկայացնող գործընկեր կազմակերպություններից ներկայացուցիչներ:

«Արդեն քսան տարի է՝ ՔՈԱՖ-ն իր գործունեությամբ բազմաթիվ հնարավորություններ է ստեղծում Հայաստանի գյուղական համայնքներում: ՔՈԱՖ «Կոնցեպտի» մեկնարկով մենք ոչ միայն քաղում ենք մեր երազանքի պտուղները, այլև կերտում նոր ապագա: Այն մեր թիմի յուրաքանչյուր անդամի ունեցած հզոր ներուժի արդյունքն է, որն ամեն անգամ գործի է դրվում միասնականության և նորարարության շնորհիվ: Սա ավելին է, քան ուղղակի կառույց. այն հույսի փարոս է, մեր ընդհանուր երազանքների խորհրդանիշն ու դեպի լուսավոր ապագա ուղին»,- բացման իր խոսքում ասաց «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) հիմնադիր նախագահ Գարո Արմենը:

«Սա մի հյուրանոց է, որ այս չքնաղ բնաշխարհում հասանելի կլինի յուրաքանչյուրին, և մյուս կողմից նրա բերած եկամուտները նորից կներդրվեն զարգացման հետագա ծրագրերի համար: Լոռու մարզ կատարած նախորդ այցի ընթացքում մենք Դսեղում տեսանք «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի ստեղծած ամբուլատոր կենտրոնը, որը մեծ տպավորություն գործեց: Շատ կարևոր է, որ մեզ մոտ ճարտարապետական նոր ձեռագիր մտնի, նոր մոտեցում մտնի, աշխատանքի կազմակերպման նոր բանաձևեր գործարկվեն: ՔՈԱՖ հիմնադրամն այդ գործը շատ լավ է անում, և ինձ համար հաճույք է այսօր այստեղ գտնվելն այսպիսի հրաշալի առիթով», - ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նույն օրը կեսօրից մեկնարկեց «ՔՈԱՖ ֆեստ» փառատոնը: Փառատոնն անցկացվում էր «Լոռին՝ քո հաջորդ ուղղությունը» նախաձեռնության շրջանակում, որն իրականացվում է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության «ITTD» ծրագրի աջակցությամբ: «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

(ՔՈԱՖ) և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) համատեղ ջանքերով իրականացվող այս նախաձեռնությունը ուղղված էր նպաստելու Լոռու տնտեսական և զբոսաշրջային գրավչության բարձրացմանը, իր շուրջը համախմբեց շուրջ 5000 այցելուների, Հայաստանի ամենավառ երաժշտական տաղանդներին, 30-ից ավել մարզաբնակ արտադրողներին և արհեստագործներին: Կենդանի կատարումներով օրվա երաժշտական ռիթմերն ապահովեցին «Hayat Project»-ը, «Լավ էլի»-ն, «Վահագն Հայրապետյան տրիո»-ն, «Միքայել Ոսկանյան և ընկերներ (MVF)»-ը, «Բամբիռ»-ն ու DJ Alen Hertz-ը:

Հանդիսավոր կերպով բացվեցին նաև Արդեանի «Լուսավոր Լոռի» արվեստի 12 ինստալյացիաները: Ինստալյացիաների հեղինակն է Արդեանի հիմնադիր տնօրեն Վազգեն Բրուտյանը: Ոգեշնչված Հայաստանի հնագույն վանքերից ու տեղի մշակութային ժառանգությունից, լուսատուփերը իրենց մնայուն տեղը գտան ՍՄԱՐԹ ավանում՝ լուսավորությամբ ընդգծելով Դեբեդի կիրճի բնապատկերի գեղեցկությունը:

«Արվեստի գործերը հաճախ տևական տպավորություն են թողնում այցելուների վրա, ինչի արդյունքում տվյալ վայրն այցելելու հավանականությունն ավելի է մեծանում: Այս ամենի հետ մեկտեղ, նման մեծ փառատոնները կարող են որոշիչ դեր խաղալ մարզի զբոսաշրջային գրավչության բարձրացման ու բրենդավորման գործում՝ այն ներկայացնելով որպես կենսունակ, մշակութային և նորարարական կենտրոն: Ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր դոնոր կառույցներին՝ Եվրոպական միությանն ու ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությանը, որ հավատում են նման նախագծերին և կիսում են մեր ոգևորությունը դրանց իրականացման հարցում»,-նշում է Տկն. Լետիցիա Կառնեվալին՝ Հայաստանում Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) պորտֆոլիոյի ղեկավարը:

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամն այս նախաձեռնությամբ մուտք է գործում իր 20-ամյա գործունեության նոր փուլ, ուր նախատեսում է ՍՄԱՐԹ կենտրոնների աշխարհագրության ընդլայնում և նոր ենթակառուցվածքների ստեղծում՝ ուղղված Հայաստանում որակյալ կրթությունն ավելի մեծ թվով աշակերտներին հասանելի դարձնելուն:

«Առաջիկա երեք տարիների ընթացքում մենք կբացենք ևս չորս սմարթ ավաններ Գորիս, Կապան, Արմավիր և Գյումրի քաղաքներում: Հատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել մեր բոլոր գործընկերներին՝ ԵՄ, այլ միջազգային կառույցներին, մեզ մշտապես աջակցող բարերարներին և կառավարությանը՝ մշտական օժանդակության և մեր առաքելությանը հավատալու համար,»- նշում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը:

***

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաների և երիտասարդների վերաբերող ծրագրերի և կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը 2004թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ ավելի քան 82 համայնքներում՝ ներդնելով ավելի քան 70 մլն ԱՄՆ դոլար՝ 100,000-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

ԵՄ-ն՝ բիզնեսի համար նախածեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի մասին

ԵՄ-ն՝ բիզնեսի համար նախածեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից և իրականացվում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից: Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ ապահովել համընդհանուր և հավասարակշռված ներառական աճ զբոսաշրջության և նորարարական ոլորտներում, որը կապահովվի Հայաստանի հյուսիսային մարզերում զբոսաշրջության նորարարական ձեռնարկումների, բարձր տեխնոլոգիաների և նորարար ձեռնարկատերերի աջակցության, բարձր տեխնոլոգիաների ոլորտում հետազոտողների միջազգային գիտելիքների փոխանակման, ինչպես նաև ուսանողների և ընդհանուր բնակչության համար ձեռներեցության մշակույթի զարգացմանը նպաստող ցանցերի միջոցով:

Նախագծի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել շուրջ 100 ձեռնարկություններին՝ օգնելով պահպանել/ստեղծել 400 աշխատատեղ, իսկ ավելի քան 800 անհատ շահառու ներգրավվել է տարաբնույթ թրեյնինգների:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Նանա Մարդոյան
էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org
Բջջ.՝ +374 55 003 723